

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 19

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

19.09.2017թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին

- Ա.Դարբինյանը - մարզպետի տեղակալ
- Տ. Բադոյանը - մարզպետի տեղակալ
- Հ.Թադևոսյանը - մարզպետի տեղակալ
- Ն.Սարգսյանը - աշխատակազմի ղեկավար
- Հ.Պապոյանը, Ս.Լամբարյանը, Մ.Սայադյանը, Վ.Գևորգյանը, Դ.Մանուչարյանը, Գ.Հակոբյանը, Ա.Օհանյանը, Լ.Բերոյանը, Գ.Բաղդասարյանը, Ս.Ղուբաթյանը, Ա.Աղլոյանը, Ս.Գրիգորյանը, Ս.Խեչումյանը, Հ. Մկրտչյանը - մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ
- Լ.Ասլանյանը - մարզպետի խորհրդական
- Ա.Մանուկյանը - մարզպետի խորհրդական
- Ա.Սարգսյանը - մարզպետի օգնական
- Տ.Էվինյանը - մարզպետի օգնական

Օր ա կ ա ր գ ու մ՝

1. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների մասին /Ձեկ. Ն.Սարգսյան/
2. ա) ՀՀ Վարչապետի մոտ կայացած խորհրդակցության մասին
բ) Ռումինիա և Աջարիա կատարած այցերի մասին
գ) ՀՀ Անկախության օրվան նվիրված միջոցառումների մասին /Ա.Նալբանդյան/
3. Հանրակրթական դպրոցներում «Համակարգչային գիտություն» առարկայի վերաբերյալ կատարված աշխատանքների մասին /Ձեկ. Հ.Թադևոսյան/
4. ՀՀ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման գործընթացի մասին /Ձեկ. Լ.Ասլանյան/
5. Կրթության ոլորտում կատարվող աշխատանքների մասին /Ձեկ. Մ.Սայադյան/
6. Համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման մասին /Ձեկ. Հ.Պապոյան/
7. ա) Վանաձոր քաղաքի փողոցների վերանորոգման մասին
բ) Հրատապ ծրագրերի ընթացքի մասին /Ձեկ. Վ.Գևորգյան/
8. Պետական և համայնքային սեփականության հողամասերի օգտագործման, տրամադրման մասին /Ձեկ. Ա.Օհանյան/

Այլ հարցեր

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց`

1. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Ա.Դարբինյանին, Հ.Թադևոսյանին, Տ.Բադոյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ.Մանուչարյանին`

Կատարել վերլուծություններ և ներկայացնել ամբողջական տեղեկատվություն մարզի համայնքներում պետական և համայնքային սեփականության հողամասերի օգտագործման և վարձակալությամբ տրամադրման վերաբերյալ:

/Ժամկետ` 29.09.2017թ./

2. ՀՀ Լոռու մարզպետի խորհրդական Լ. Ասլանյանին`

Ներկայացնել հիմնավորված ծրագրեր Ռաֆթինգի և «Մորգանի թանգարանի» ստեղծման վերաբերյալ:

3. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Հ.Թադևոսյանին, մարզպետի խորհրդական Լ. Ասլանյանին`

Ներկայացնել առաջարկություններ մարզի հանրակրթական դպրոցներում «Համակարգչային գիտություն» առարկայի դասավանդման վերաբերյալ:

4. ՀՀ Լոռու մարզպետի խորհրդական Լ. Ասլանյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ Հ. Մկրտչյանին`

ա/ Վանաձոր համայնքի ղեկավարի հետ համատեղ քննարկել, անհրաժեշտության դեպքում լրամշակել և ներկայացնել Աջարիայի պատվիրակության այցի ծրագիրը

բ/ մինչև սեպտեմբերի 28-ը Վանաձոր համայնքի ղեկավարի հետ քննարկել և ներկայացնել Վանաձոր համայնքի զարգացման ծրագիրը

գ/ բազմակողմանի քննարկումներ կատարել և դրանց հիման վրա կազմել ու ներկայացնել Շվեդիայի Ուպսալա նահանգի և Ռումինիայի Հարգիտա նահանգի հետ կապերի հետագա ամրապնդման վերաբերյալ առաջարկություններ:

5. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ Հ. Պապոյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ.Մանուչարյանին`

Ըստ համայնքների կատարել ուսումնասիրություններ և 10-օրյա ժամկետում ներկայացնել համեմատական տեղեկատվություն մարզի համայնքներում 1 շնչին ընկնող սեփական եկամուտների չափի վերաբերյալ:

6. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ Հ. Պապոյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ա. Զանազյանին`

10-օրյա ժամկետում կատարված ուսումնասիրությունների և վերլուծությունների հիման վրա ներկայացնել համեմատական վերլուծություններ և տեղեկատվություն համայնքներում աղբահանության պայմանագրերի կնքման , վարձավճարների սահմանման և հավաքագրման ընթացքի վերաբերյալ:

7. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Ս.Լամբարյանին`

Ներկայացնել տեղեկատվություն ծերերի և հաշմանդամների օրվա միջոցառումների վերաբերյալ:

8. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Մ.Սայադյանին`

Մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել առաջարկություններ «Ուսուցչի օրվա» միջոցառումների ծրագրի վերաբերյալ:

9. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ա. Ջանազյանին՝

Ամենօրյա հսկողություն իրականացնել Վանաձոր համայնքի ասֆալտապատման շինարարական աշխատանքների պատշաճ որակի ապահովման նկատմամբ:

ԼՈՐՈՒ ՄԱՐԶՊԵՏ



Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Արձ.Ս. Մակարյան

Հեռ. 0322 /4-32-99/